<<ՀԱԶԱՐԱՇԵՆ>>
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

<<HAZARASHEN>>
COMPANY
LIMITED

*Պայմանագիր՝ « N ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1»*

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

## Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում և բարեկարգում

Օբյեկտ՝ **Մասիս համայնքի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգում**

Պատվիրատու՝ **Արարատի մարզ, Մասիսի համայնքապետարան**

Հատոր 0. Ելակետային տվյալներ


ԼԻՑԵՆԶԻԱ
ՔՊԼ 17114
Տրված է
ԱՆԺԱՄԿԵՏ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Մասիս համայնքի ղեկավար Դ. Համբարձումյան

*«Հազարաշեն» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Իգիթյան*

*ՆԳՃ Ռ. Հարությունյան*

*Երևան - 2022 թ.*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ
2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ՏԵՂԵԿԱՆՔ ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
5. ՏՈՊՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
7. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
8. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 1-ԻՆ և 2-ՐԴ ՀԱՐԿԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ
9. ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 17114 ՆԵՐԴԻՐՆԵՐՈՎ

Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցում, հիմնանորոգում
և բարեկարգում

Պայմանագիր՝ № ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1

Օբյեկտ՝ Մասիս համայնքի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգում

Նախագծի կազմը

| Հատոր N | Նշանակում | Անվանում | Ծանոթագրություն |
|---|---|---|---|
| Հ0 | ԵՏ | Ելակետային տվյալներ | |
| Հ1 | ՃՇ | Ճարտարապետաշինարարական մաս | |
| Հ2 | ԿԼ | Կոնստրուկտորական մաս | |
| Հ3 | ԷՏ, ՕՋ, ՋԿ | Ինժեներական մասեր | |
| Հ4 | ՇԿՆ | Շինարարության կազմակերպման նախագիծ | |
| Հ5 | | Նախահաշվային փաստաթղթեր | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)**

**Արարատի մարզ, Մասիս համայնք**

(մարզ, համայնք)

**N CPP0-0000-7428 18.07.2023թ.**

Օբյեկտ

Մասիս համայնքի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգում նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն (հակիրճ բնորոշումը, հզորությունը,. ռիսկայնության աստիճանը /կատեգորիան/, նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը *Արարատի մարզ, Մասիս համայնք Մասիս քաղաք, 0, 03-003*

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Մասիս համայնք
Արարատի մարզ ք. Մասիս, 0,

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը կառուցապատողի հայտը,անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 02022016-03-0011 վկայականը, նախագծի էսքիզային առաջարկությունը

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը Երկու տարի

(N1 Հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

**1.** Հողամասը գտնվում է
բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի մասում,գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն,կադաստրային ծածկագիր 03-003-0085-0006

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

**2. (*) Հողամասի չափերը**

0,53 հա

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

**3. Հողամասի առկա վիճակը**

Կառուցապատված

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

**4. (*) Տրանսպորտային պայմանները**

Համայնքային նշանակության ճանապարհ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

**5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ** (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր,հաղորդակցուղիներ

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

**6. (*) Կից հողամասեր**

Հարևան հողամասեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համ ձայն ներկայացված սխեմայի)

**7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տրածքներ (պահպանական գոտիներ)**

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

**8. (*) Հատակագծային սահմանափակումներ**

---

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

**9. Ճարտարապետահատակագծային պահանջներ**

մշակել մանկապարտեզի հիմնանորոգման կառուցման աշխատանքային նախագիծ՝անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցված վկայականում ամրագրված հողամասի սահմաններում

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

**9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)**

ըստ էսքիզային առաջարկության

**9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)**

ըստ էսքիզային առաջարկության

**9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)**

ըստ էսքիզային առաջարկության

**9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)**

ըստ էսքիզային առաջարկության

**9.5.** կառուցապատման տոկոսը /կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)/
ըստ էսքիզային առաջարկության

**9.6.** կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)
ըստ էսքիզային առաջարկության

**9.7.** այլ պահանջներ
հաշվի առնելով նորմատիվային պահանջները ջրահեռացումը նախատեսել կազմակերպված,բացառելով դեպի հարևան տարածքներ անձրևաջրերի հոսքը

**10.** Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը
3 և 4 մասնաշենքերի քանդում

**11.** Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները
--

**12.** (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

**12.1.** (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում
Կցվում է Նախքան աշխատանքային նախագիծ ներկայացնելը ստանալ Վեոլիա ջրի տեխպայմանի համաձայնությունը
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

**12.2.** (*) էլեկտրամատակարարում
Կցվում է Նախքան աշխատանքային նախագիծ ներկայացնելը ստանալ ՀԷՑ տեխպայմանի համաձայնությունը
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

**12.3.** (*) գազամատակարարում
Կցվում է Նախքան աշխատանքային նախագիծ ներկայացնելը ստանալ Գազպրոմ Արմենիա տեխպայմանի համաձայնությունը
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

**12.4.** (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներքնայալ դիտահորը) տեղադիրքը
Կցվում է Նախքան աշխատանքային նախագիծ ներկայացնելը ստանալ Վեոն արմենիա տեխպայմանի համաձայնությունը

(համաձայն **N1** Հավելվածի **58**-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

**12.5.** թույլ հոսանքներ
Չկան

**12.6.** աղբահանություն
համաձայն համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի

**13.** Տարածքի ինժեներական նախապատրաստում
տարածքը նախապատրաստել շինարարությունը սկսելու համար
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

**14.** Բարեկարգում
կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

**15.** Շինարարական նյութեր

երկաթբետոն,քար,ամրան,մետաղ

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

**16.** Պաշտպանական կառույցներ

---

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

**17.** Հակահրդեհային պահանջներ

ապահովել հակահրդեհային նորմատիվային պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

**18.** Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Հաշմանդամների և սակավաշարժ խմբերի հմար կառուցել թեքահարթակ

**19.** Շրջակա միջավայրի պահպանում

պահպանել շրջակա միջավայրի աղտոտումը վտանգավոր նյութերից

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

**20.** Շինարարության կազմակերպում

մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝նկատի ունենալով ՀՀ կառավարության 12,04,2001թ հ,286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կարգի ԺԲ ենթակետի և 44,1 կետի պահանջները

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

**21.** Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

երկու տարի մեկ փուլով,աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**22.** Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

<< կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝համալիր փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

**23.** Միջանկյալ համաձայնեցում

Համաձայնեցնել Մասիս համայնքի ղեկավարի հետ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ **N1** Հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

**24.** Հասարակական քննարկումներ

--

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

**25.** Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Համաձայնեցնել Մասիս համայնքի ղեկավարի հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև **N1** Հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

**26.** Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

---

**27.** Այլ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել << կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11,09,2017թ,բնակելի հասարակական,արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և << քաղաքաշինության նախարարի 29,11,2006թ h/ 273-Ն հրամնն ուժը կորցրած ճանաչելու մասին h 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Դավիթ Համբարձումյան

19.07.2023

X

VERIFIED OCSP 19.07.2023 11:24:36 GMT+4

Подписано: HAKOBYAN NORAYR 2205860097

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

**N CPP0-0000-7428 18.07.2023թ.**

*Հավելված N 1*
*«      » հունիսի 2022թ. կնքված*
*ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/24-1 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71241200 | Մասիս համայնքի մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների նախագծային փաստաթղերի կազման խորհրդատվական ծառայություններ ձեռք բերում: ձեռք բերվող ծառայության բնութագիրը Տես ներքում | դրամ | 21 750 000 | 1 | Մասիս համայնք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ |

| հասցե | Տեխնիկական առաջադրանք |
|---|---|
| Ք. Մասիսի թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգում | **<u>Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիր.</u>**<br>-Շինության մակերեսը 1700քմ<br>-Մանկապարտեզի մի մասնաշենքի քանդում,<br>-Խմբասենյակների, միջանցքի հիմնանորոգում<br>-Քանդված հատվածի կառուցում,<br>-Տանիքի հիմնանորոգում ցինկապատ թիթեղով,<br>-Դռների և պատուհանների փոխում,<br>-Սալիկապատում,<br>-Ընդանուր շենքի հիմնանորոգում,գոյություն ունեցող ցանկապատի յուղաներկում,<br>-Ջեռուցումը նախատեսել գազի կաթսաներով: Ջեռուցման համակարգի խողովակները նախատեսել մետաղապլաստից, ջեռուցման մարտկոցները՝ ալյումինե:<br>-Օդափոխությունը նախատեսել բնական տարբերակով:<br>-Նախատեսել էլեկտրականության մոնտաժման աշխատանքները ըստ նորմատիվ պահանջների:<br><br>***<u>Ընդհանուր դրույթներ</u>***<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն 5 (հինգ) թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով) և 1 օրինակ ռուսերեն լեզվով ծավալաթերթ-նախահաշիվ:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:<br>***<u>Հիմնական պարտականություններ և պահանջներ</u>***<br>*Հիմնական պարտականություններ՝*<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:<br>• Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:<br>*Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*<br>• Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,<br>• հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:<br>*Նախագծերի նկարմամբ պահանջներ*<br>Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:<br>Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ տարածքում գործող պետական ստանդարտներինմերին, հրահանգներին, նորմերին և ԳՈՍՏ-ի պահանջներինպահանջներին համապատասխան և<br>*Համաձայնեցումներ*<br>• համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,<br>• կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:<br><br>***<u>Փորձաքննություն</u>***<br>Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն համալիր փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում:<br>Տեխնիկական վիճակի վերաբերյալ սեյսմիկ եզրակացությունը կցվում է: |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Մասիս համայնք | «Հազարաշեն» ՍՊԸ |
| ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4 | 0014 ք. Երևան, Պ. Սևակի. 1 |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900 432 000 348 | Հ/Հ 11500821114211 |
| ՀՎՀՀ 04240324 | ՀՎՀՀ 01816381 |
| Դ. Համբարձումյան ------------------ (ստորագրություն) | Ռ. Իգիթյան ------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հայաստանի Հանրապետություն*

« Մել-Հով»

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N 4 մանկապարտեզի տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանների մասին
(համաձայն ֆոնդային նյութերի տվյալների)

Պատվիրատու «Հազարաշեն» ՍՊԸ
Պայմանագիր՝ N առ 19.04.2023թ

Տնօրեն Վ.Թադևոսյան

Երևան 2023թ.

## 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ 19.04.2023թ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի և տեխնիկական առաջադրանքի, «Մել-Հով» ՍՊԸ-ի կողմից 2023թ. ապրիլ ամսին կատարվել են Արարատի մարզի Մասիս քաղաքի N4 մանկապարտեզի տեղամասի ինժեներաերկրաբանական հետազննման աշխատանքները, օգտագործելով «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի տարածքում 2019թ. իր կողմից իրականացված ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների տվյալները:

Մասիս քաղաքի N4 մանկապարտեզը տեղակայված է Հանրապետության փողոցի վրա:

Սույն ինժեներաերկրաբանական եզրակացություն-տեղեկանքը կազմվել է ֆոնդային և հրատարակված նյութերի վերլուծման և ամփոփման հիման վրա:

## 2. Ընդհանուր տեղեկատվություն շրջանի և տեղամասի վերաբերյալ

Արարատյան արտեզյան ավազանը (ԱԱԱ) տեղադրված է Արաքս գետի միջին հոսանքում, Արարատյան գոգահովիտի սահմաններում, որը ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք շուրջ 120.0 կմ երկարությամբ և 10.0-30.0 կմ լայնությամբ: Գոգահովիտը գտնվում է երկրի մակերևույթից 800-1000 մ բացարձակ բարձրությունների վրա, զբաղեցնում է շուրջ 1300 $կմ^2$ մակերես և իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրերի բնական շտեմարան, ուր ջրերը մուտք են գործում գոգահովիտը շրջափակող Արարատի և Արագածի լեռնազանգվածներից, Գեղամա և Հայկական լեռնաշղթաներից:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Արարատյան գոգահովիտը իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հովտի հետ, իր Ախուրյան, Մեծամոր, Քասախ, Հրազդան, Ազատ, Վեդի վտակներով, որոնց արտաբերման կոներով և լավային հոսքերով էլ սնվում է Արարատյան ստորերկրյա ջրերի ավազանը:

Հիդրոերկրաբանական տեսակետից Արարատյան գոգավորությունն իրենից ներկայացնում է տիպիկ փակ միջլեռնային արտեզյան ավազան՝ ստորերկրյա ջրերի կուտակման ու բեռնաթափման գոտի:

Արարատյան արտեզյան ավազանն ունի բարդ տեկտոնական և երկրաբանա-հիդրոերկրաբանական կառուցվածք:

Տեկտոնական տեսակետից Արարատյան գոգավորությունը իրենից ներկայացնում է Արաքս գետի տեկտոնական գոտու վերադիր միջլեռնային ճկվածք, որի սահմաններում հետծալքավորման հետևանքով առանձնացնում են արևմուտքից արևելք տարածված հետևյալ հինգ ենթակառուցվածքները՝ որոնք համարվում են երկրորդ կարգի հիդրոերկրաբանական կառուցվածքներ:

- Հոկտեմբերյանի իջվածք,
- Սովետաշենի բարձրացում,

- Արտաշատի իջվածք,
- Խոր Վիրապի բարձրացում,
- Արագայանի իջվածք:

Նշված կառուցվածքները իրարից տարբերվում են երկրաբանական կառուցվածքով, չորրորդական ապարների տեղադրման պայմաններով, հզորությամբ, ֆիզիկական հատկություններով և այլն: Կառուցվածքների սահմանները գրեթե համընկնում են ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերի տարածաշրջանների սահմանների հետ:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից շրջանը իրենից ներկայացնում է ալյուվիալ ողողահովտային դարավանդային հարթություն, որի հիմքում են գտնվում ալյուվիալ (գետային) և լճային նստվածքները:

Մասիսի քաղաքի N4 մանկապարտեզի շենքը տեղակայված է Մասիս համայնքի կենտրոնում: Տեղանքը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են 834-835 մետրերի սահմաններում:

Ուսումնասիրվող տարածքը մտնում է սուբտրոպիկական, մայրցամաքային կլիմայական գոտու մեջ, որը բնութագրվում է տաք ամառով և չոր ցուրտ ձմեռով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 40-41°C, նվազագույնը -30°C: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 250մմ:

## 3.Տեղամասի երկրաբանական կառուցվածքը և հիդրոերկրաբանական պայմանները

Տեղամասը գեոմորֆոլոգիական տեսանկյունից իրենից ներկայացնում է ալյուվիալ ողողահովտային դարավանդային հարթություն, որի երկրաբանական կառուցվածքում մեծ դեր են խաղում ալյուվիալ և լճային նստվածքները՝ կավերը, կավավազները և ավազակավերը:

Համաձայն ֆոնդային երկրաբանական աշխատանքների արդյունքների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքում մասնակցում են գրունտների հետևյալ տարբերակները, վերևից ներքև

**Շերտ1.** Հողառ. կոպիճ

**Շերտ 2.** Կավ մոխրագույն հոսուն համակազմվածքով, մանրահատիկ ավազների ներշերտերով 0.1÷0.3մ հզորությամբ: Գրունտը տեղամասում ունի համատարած բնույթ 2.6÷4.2 բացահայտված հզորությամբ:

**Շերտ3.** Կավ դարչնագույն ձիգ համակազմվածքով, 1.0÷3.5մ հզորությամբ:

**Շերտ 4.** Ավազակավ դարչնագույն հոսուն համակազմվածքով, 1.9÷3.0մ հզորությամբ:

Տեղամասի տարածքում գրունտային ջրերի մակարդակը տատանվում է 3.0÷3.5մ սահմաններում: Գրունտային ջրերի սնուցման աղբյուր են հանդիսանում մթնոլորտային

գոտուց ներթափանցվող ջրերը և Արարատյան արտեզյան ավազանի ճնշումային ջրատար հորիզոնի վերհոսքի ջրերը:

Համաձայն Մասիս քաղաքի դիտման հորատանցքերի գրունտային ջրերի մակարդակների մոնիտորինգի տվյալների 2009-2023թթ ընթացքում գրունտային ջրերի մակարդակները իջել են շուրջ 1.8÷2.5 մետրով: Նշված ժամանակատվածում Մասիսի քաղաքապետարանում ստացվել են մի շարք բնակիչների ահազանգեր, առն այն, որ իրենց բնակելի տներում ի հայտ են եկել կրող պատերի ճաքեր և ճեղվածքներ, որոնք սպառնում են շինությունների կայունությանը: Նշված նեգատիվ երևույթի հիմնական պատճառը գրունտային ջրերի մակարդակների իջեցումն է, որը բացատրվում է Մասիսի տարածաշրջանում ձկնաբուծության նպատակով գործող հարյուրավոր հորատանցքերի ճնշումային ջրատար հորիզոնից անթույլատրելի ջրառով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրունտային ջրատար հորիզոնի հիմնական սնուցման աղբյուր է հանդիսանում ավազանի ճնշումային հորիզոնից վերընթաց սնուցումը, ապա ձկնաբուծական տնտեսությունների կողմից իրականացվող հավելյալ ջրառը տեղիք է տալիս գրունտային ջրերի մակարդակների իջեցմանը:

## 4.Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշները

Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշները ըստ լաբորատոր ուսումնասիրությունների և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների, տրվում են ստորև աղյուսակում

| NN | Հատկանիշի անվանումը | | Գրունտի անվանումը և շերտի համարը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Կավ,հոսուն համակազմվածքով N 2 | Կավ, ձիգ համակազմվածքով N 3 | ավազակավ, հոսուն համակազմվածքով N 4 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Բնական խոնավությունը | W | 0.484 | 0.321 | 0.361 |
| 2 | Պլաստիկության բնութագիրը<br>2.1. Հոսունության սահմանը | Wl | 0.518 | 0.432 | 0.398 |
| | 2.2. Գլանման սահմանը | Wp | 0.253 | 0.228 | 0.231 |
| | 2.3. Պլաստիկության թիվը | Ip | 0.265 | 0.204 | 0.167 |
| | 2.4. Հոսունության ցուցանիշ | Il | 0.872 | 0.456 | 0.778 |
| 3 | Խտությունը գ/սմ$^3$<br>3.1. Բնական վիճակում | P | 1.62 | 1.9 | 1.84 |
| | 3.2. Գրունտի մասնիկների | Ps | 2.73 | 2.71 | 2.7 |
| | 3.3. Չոր գրունտի | Pd | 1.092 | 1.438 | 1.352 |
| 4. | Ծակոտկենությունը | n | 60.01 | 46.93 | 49.93 |
| 5 | Ծակոտկենության գործակիցը | e | 1.501 | 0.884 | 0.997 |
| 6. | Ներքին շփման անկյունը | φ | $5.7^0$ | $12.7^0$ | $11.3^0$ |
| 7. | Տեսակարար շաղկապվածությունը կգ/սմ$^2$ | Cn | 0.25 | 0.32 | 0.20 |
| 8. | Դեֆորմացիայի մոդուլը կգ/սմ$^2$ | E | 81.6 | 1.52 | 84.4 |
| 9. | Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշների ՀՀՇՆ II 6.02-0.6 | Աղ.2 | IV | III | IV |
| 10 | Գրունտների մշակման կարգը ըստ ՇՆ և Կ IV-2-82 | Աղ.1 | $8^ա$ | $8^ա$ | $8^ա$ |

Մանրացաքարերի շերտի և շեղումների համար որպես հիմնատակի գրունտ են ծառայում NN 2.3 շերտի գրունտները, որոնք համաձայն ГОСТ 25100-2011 B 2.1 կետի B-4 աղյուսակի ուժեղ դեֆորմացվող են:

## 5. Եզրակացություններ

Կատարված ինժեներաերկրաբանական երկրաֆիզիկական աշխատանքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Տեղամասը գեոմորֆոլոգիական տեսակետից իրենից ներկայացնում է ալյուվիալ պրոլյուվիալ դարավանդային հարթություն, որի երկրաբանական կառուցվածքում մեծ դեր են խաղում ալյուվիալ և լճային նստվածքները՝ կավերը, կավավազները և ավազակավերը:

2. Ուսումնասիրվող տարածքը մտնում է սեյսմիկական մայրցամաքային կլիմայական գոտու մեջ, որը բնութագրվում է տաք ամառով և ցուրտ ձմեռով:

3. Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանաերկրաֆիզիկական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներաերկրաբանական հետևյալ տիպերը.

**Շերտ 1.**-ավազակոպիճ

**Շերտ 2.**- կավ հոսուն համակարգվածքով, մանրահատիկ ավազների ներշերտերով,

**Շերտ 3**- կավ՝ ծիգ համակարգվածքով,

**Շերտ 4** ավազակավ հոսուն համակարգվածքով.

4. Գոյացած ուժեղ ձևի վերամշակման համար որպես հիմնատակի գրունտներ խորհուրդ է տրվում ընտրել շերտ N 2.3 գրունտները, ելնելով նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներից և սեյսմիկ պայմաններից:

5. Կատարված երկրաֆիզիկական աշխատանքների արդյունքում իրականացվել են գործիքային գրանցումներ գրունտների առանձին շերտերում. առանձական ալիքների տարածման արագությունները որոշելու նպատակով. Պարզվել է, որ նրանցում՝ սեղմման առավելագույն հորիզոնական արագացումները 0.48g նախնական սեյսմիկ վտանգի արժեքի դեպքում գտնվում են 0.394g -0.416g տիրույթում: Լայնական ալիքների արագության միջին արժեքը տարածքի գրունտների համար տատանվում է 200մ/վրկ -226մ/վրկ սահմաններում, իսկ միկրոտատանումով գրանցված տվյալներով ստացված արդյունքներով գրունտների տատանման գերակշռող պարբերությունները գտնվում են 0.611-0.692վրկ տիրույթում:

Համաձայն ՀՀ ՇՆ 20.04 ծրագրի՝ տարածքը 3-րդ դասի համապատասխանում են սեյսմիկ III կարգի գրունտներին

6. Համաձայն СНиП II-15-74-ի թիվ 4 հավելվածի թիվ 2 աղյուսակի հիմնատակի կավային գրունտների վրա (հոսունության ցուցիչը =0.953 և ծակոտկենության գործակիցը e=1.5) պայմանական հաշվարկային ճնշումը կազմում է 1.0կգ/սմ$^{2}$:

7.Ելնելով գրունտների ֆիզիկամեխանիկական և սեյսմիկ հատկանիշներից ինչպես նաև ճարտարապետական և կառուցվածքային առանձնահատկություններից հիմքերի տեսակը և ձևը պետք է ընտրի նախագծողը:

Հաշվի առնելով այն,որ համաձայն ГОСТ 25100-2011 В 2.1 կետի В-4 աղյուսակի գրունտները ուժեղ դեֆորմացվող են, առաջարկվում է նոր նախագծվող շենքերի հիմնատակերը դնել խամքարաբետոնյա հատվածի վրա, որի չափանիշները պետք է ընտրի նախագծողը:

8.Տեղամասում գրունտային ջրերը հայտնաբերվել են 3.0-3.5մ սահմաններում: Դրանք համաձայն քիմիական անալիզի տվյալների ըստ բիկարբոնատային հիմնայնության, սուֆատների պարունակության և ջրածնային ցուցիչի թույլ ագրեսիվ են $W_4$ տիպի և ոչ ագրեսիվ $W_4$- $W_{12}$ տիպի բետոնների նկատմամբ:

10.Կառույցի շինարարական փոսորակները փորելուց հետո և հիմքերը լցնելուց առաջ անհրաժեշտ է ունենալ ինժեներ երկրաբանի եզրակացությունը:

Կազմեց՝
ինժեներ երկրաբան Վ.Թադևոսյան

ՏՈՊՈԳՐԱՖԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ
Մ1:1000



«Հաստատում եմ»
«ՔՕՓԿ» ԲԲԸ
Գիտ.աշխ.գծով փոխտնօրեն՝
________ Ա.Մովսիսյան
«_08_» ________ 2020թ.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Արարատի մարզի քաղ. Մասիս Հանրապետության փող. № 2/35 հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզի երկու համալիրների մասնաշենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Հետազննությունը կատարվել է Մասիս համայնքի ղեկավար Դ.Համբարձումյանի դիմում-գրության համաձայն:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող մանկապարտեզի տարածքը գտնվում է III սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը $A_{max}$ = 0,4g (IX և ավել բալականությամբ), ըստ ՀՀՇՆ II-6-02-2006 (հավելված Ա):

Մանկապարտեզի համալիրների մասնաշենքերի չափերն ու դասավորությունը հիմնականում համապատասխանում են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից տրված հատակագծերին (սեփ. վկ. № 818563):

Մանկապարտեզի երկու համալիրների («հին» և «նոր» մասնաշենքերի (տես սխեմատիկ հատակագիծը) նկարագրությունները և զննման արդյունքները բերվում են ստորև առանձին-առանձին:

### «Հին» համալիրի մասնաշենք

«Հին» համալիրը, հարթ տեղանքի վրա 1950-ական թվականներին իրականացված, մանկապարտեզի և սպորտային դահլիճի ու պահեստի երկու մասնաշենքերից բաղկացած համալիր կառույց է:

Մասնաշենքերը միմյանց հետ կապված են միահարկ անցասրահով: Անցասրահը իրականացվել է երկու մասնաշենքերի միջև ընկած տեղամասում վերնածածկի իրագործմամբ, որի հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերը հենված են մանկապարտեզի երկու մասնաշենքերի պատերի վրա, իսկ սրահի

Թիվ 4 մանկապարտեզի համալիրների

սխեմատիկ հատակագիծը



կողաճակատներն իրականացվել են քարաշար պատերով, լուսամուտների փեղկերով:

Մասնաշենքերի արտաքին տեսքը և բնութագրիչ լուսանկարները բերվում են Հավելված 1-ում:

## Մանկապարտեզի մասնաշենքը

Մասնաշենքն իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ~ 12,4x22,4 մ արտաքին եզրաչափերով 2 հարկանի կառույց:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական կրող ու լայնական պատերով և միջհարկային ծածկերով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնով:

Պատերն իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարի երկշերտ շարվածքով, կրավազային շաղախի կիրառմամբ:

Արտաքին պատերի գետնախարսխի հատվածամասի երեսաշարն իրականացված է «բուրքառաշ» բազալտաքարերից:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Միջհարկային ծածկերն իրականացված են հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Սանդղավանդակը լուծված է պողպատե թեքահեծաններով, երկաթբետոնե հատավոր աստիճաններով ու միաձույլ երկաթբետոնե հարթակներով:

Տանիքը լանջավոր է փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին ազատ ջրահեռացմամբ:

Մասնաշենքն երկու կաղաճակատների կողմից ունի միահարկ պատշգամբներ, որոնց ծածկերն երկրորդ հարկի համար, հանդիսանում են բաց հարթակներ:

Պատշգամբները կազմված են միաձույլ երկաթբետոնե լայնական շրջանակներով, կայային հեծաններով և հավաքովի երկաթբետոնե սալերից վերնածածկով:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- ❖ Մասնաշենքն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում գործող ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես՝
- ➢ Միջհարկային ծածկերը չեն ապահովում հորիզոնական հարթության մեջ կոշտ սկավառակների աշխատանքը:

- Կառույցի պատերն իրականացված են ոչ ամրանավորված շարվածքով:
- Երկայնական ու լայնական պատերի միջև հեռավորությունը գերազանցում է նորմատիվային պահանջվող նվազագույն 6,0 մ չափը:
- Ծածկերի և վերնածածկերի մակարդակում բոլոր երկայնական ու լայնական պատերի վրայով իրականացված չեն միաձույլ երկաթբետոնե հակասեյսմիկ գոտիներ:
- Մասնաշենքը երկարատև ժամանակ չի շահագործվում և գտնվում է բարձիթողի անմխիթար վիճակում:
- Պատերում առկա են նստվածքային բնույթի, թեք և ուղղաձիգ ճաքեր մինչև 4 մմ բացվածքով:
- Երկայնական ու լայնական պատերի հանդիպակած տեղամասերում առաջացել են տարանջատման ճաքեր մինչև 3 մմ բացվածքով:
- Տեղի է ունեցել պատաշարվածքի առանձին տեղամասերում շաղախի մակերևութային ու խորքային հողմահարում:
- Դիտվում է միջհարկային ծածկերի սալերի միջև կարանների բացում:
- Տանիքածածկույթի և ջրհորդանների վնասվածքների հետևանքով տեղի է ունենում հալոցքային ու անձրևաջրերի ներթափանցում վերնածածկի սալերի ու պատաշարվածքի մեջ:
- Մասնաշենքի պատշգամբների շրջանակների, կապային հեծանների ու վերնածածկի սալերն ունեն քայքայված տեղամասեր, որտեղի ամրանները մերկացած են և ենթարկվել են կոռոզիայի:
- Մասնաշենքի արտաքին սալվածքը մեծամասամբ գտնվում է քայքայված, անբարեկարգ և բուսածածկ վիճակում:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության աստիճանը ըստ գործող ՀՀՇՆ-II-6 02-2006 և հետազոտության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 3-րդ աստիճանի:

Այն ենթակա է ուժեղացման-վերականգնման:

Նկատի ունենալով մանկապարտեզի գործառնական նշանակությունը, ըստ ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» նորմերի պահանջվում է իրականացնել մասնաշենքի սեյսմակայունության բարձրացմանը միտված միջոցառումներ

(վերակառուցման մակարդակը ընդունվում է ուժեղացում, գործող նորմատիվ պահանջներին համապատասխանեցմամբ):

Սպորտային դահլիճի և պահեստի մասնաշենք

Մասնաշենքն իրենից ներկայացնում է հատակագծում Г-աձև ուրվագծով, սպորտային դահլիճի և պահեստի համապատասխանաբար ~6,0x12,5 մ և ~4,6x25,0 մ արտաքին եզրաչափերով երկու միահարկ հատվածամասերից բաղկացած առանձին կառույց:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական կրող ու լայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնով:

Պատերն իրականացված են տուֆաքարի և բետոնե մանրահատ բլոկների երկշերտ շարվածքով, կրավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են և առանձին տեղամասերում՝ պողպատե տարրերից:

Մասնաշենքի սպորտային դահլիճի վերնածածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով, իսկ պահեստային հատվածամասինը՝ փայտե տարրերից:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին ազատ ջրահեռացմամբ:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- Մասնաշենքն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում գործող ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես՝
- Վերնածածկը չի ապահովում հորիզոնական հարթության մեջ կոշտ սկավառակի աշխատանքը:
- Կառույցի պատերն իրականացված են ոչ ամրանավորված շարվածքով:
- Երկայնական ու լայնական պատերի միջև հեռավորությունը գերազանցում է նորմատիվային պահանջվող նվազագույն 6,0 մ չափը:
- Վերնածածկերի մակարդակում բոլոր երկայնական ու լայնական պատերի վրայով իրականացված չէ միաձույլ երկաթբետոնե հակասեյսմիկ գոտի:

- Կառույցի հատվածամասերը միմյանցից բաժանված չեն դեֆորմացիոն կարանով:
- Մասնաշենքը երկարատև ժամանակ չի շահագործվում և գտնվում է բարձիթողի անմխիթար վիճակում:
- Պատերում առկա են նստվածքային բնույթի, թեք և ուղղաձիգ ճաքեր մինչև 4 մմ բացվածքով.
- Երկայնական ու լայնական պատերի հանդիպակած տեղամասերում առաջացել են տարանջատման ճաքեր մինչև 3 մմ բացվածքով:
- Պատաշարվածքի շաղախը ենթարկվել է մակերևույթային և խորքային հողմահարմանը:
- Տանիքածածկույթի վնասվածության պատճառով տեղի է ունենում հալոցքային ու անձրևաջրերի ներթափանցում վերնածածկի սալերի մեջ:
- Քայքայված, անբարեկարգ և բուսածածկ վիճակում է մասնաշենքի շուրջի սալվածքը:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության աստիճանը ըստ գործող ՀՀՇՆ-II-6.02-2006 և հետազոտության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 3-րդ աստիճանի:

Այն ենթակա է ուժեղացման-վերականգնման:

Նկատի ունենալով մանկապարտեզի գործառնական նշանակությունը, ըստ ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնականդրույթներ» նորմերի պահանջվում է իրականացնել մասնաշենքի սեյսմակայունության բարձրացմանը միտված միջոցառումներ (վերակառուցման մակարդակը ընդունվում է ուժեղացում, գործող նորմատիվ պահանջներին համապատասխանեցմամբ):

Մասնաշենքերի միջև տաքանցումային սրահն իրականացվել է դրանց հետ խարսխակապմամբ, գործող շիննորմերի պահամջներին անհամապատասխան (այն պետք է իրականացվեր մասնաշենքերից բաժանված հակասեյսմիկ կարաններով), չունի հստակ կոնստրուկտիվ սխեմա, ինչի և նպատակահարմար է այն ամբողջությամբ ապամոնտաժել և իրականացնել նորը.

Հավելված 1.





Նկ. 1. Մասնաշենքերի արտաքին տեսքը





Նկ. 2. Մասնաշենքերի ներքին տեսքը





Նկ. 3.





Նկ. 3.





Նկ. 3. Պատերում առկա ճաքերի և տարանջատումների տեսքը





Նկ. 4. Պատաշարվածքի վնասվածքները





Նկ. 5. Ծածկասալերի միջև կարանների բացում





Նկ. 6. Տանիքածածկույթի վնասվածքները (ջրակաթոցներ)





Նկ. 7. Արտաքին սալվածքի տեսքը





Նկ. 8. Անցումային սրահի վնասվածքները

## «Նոր» համալիրի մասնաշենքերը

«Նոր» համալիրը փոքր թեքությամբ տեղանքի վրա 1988 թվականին իրականացված, մանկապարտեզի և սպորտային դահլիճի երկու մասնաշենքերից բաղկացած համալիր կառույց է:

Մասնաշենքերը միմյանց հետ կապված են միահարկ տաքանցումային սրահով:

Տաքանցումային սրահի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ երկաթբետոնե լայնական կրող շրջանակներով, երկայնական պատերով և վերնածածկով: Այն մասնաշենքերից բաժանված է հակասեյսմիկ կարաններով:

Մասնաշենքերի արտաքին տեսքը և բնութագրիչ լուսանկարները բերվում են Յավելված 2-ում:

### Մանկապարտեզի մասնաշենք

Մասնաշենքն իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ~ 12,6x28,8 մ արտաքին եզրաչափերով 2 հարկանի կառույց:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երեք երկայնական կրող ու լայնական պատերով և միջհարկային ծածկերով:

Պատերի հիմքերը ժապավենային են, միաձույլ երկաթբետոնից:

Պատերն իրականացված են տուֆաքարի երկշերտ շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Արտաքին պատերը դրսի կողմից երեսպատված են տուֆե սրբատաշ սալիկներով, իսկ գետնախարսխային հատվածամասի երեսաշարն՝ սրբատաշ բազալտաքարերից:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Միջհարկային ծածկերն իրականացված են հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Սանդղավանդակը լուծված է պողպատե թեքահեծաններով, երկաթբետոնե հատավոր աստիճաններով ու միաձույլ երկաթբետոնե հարթակներով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Մասնաշենքն երկու կաղաձակատների կողմից ունի էվակուացիոն արտաքին սանդուղքներ, որոնք լուծված են պողպատե տարրերից աստիճաններով և միաձույլ երկաթբետոնե բարձակային հարթակներով:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- Մասնաշենքն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում գործող ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես՝
  - Միջհարկային ծածկերը չեն ապահովում հորիզոնական հարթության մեջ կոշտ սկավառակի աշխատանքը:
  - Երկայնական ու լայնական պատերի միջև հեռավորությունը գերազանցում է նորմատիվային պահանջվող նվազագույն 6,0 մ չափը, ըստ որում առկա ներքին միայն 2 լայնական պատերը, սանդղավանդակի տեղամասում իրագործված են մինչև ներքին երկայնական պատը:
- Մասնաշենքի պատերում առկա են նստվածքային բնույթի, թեք և ուղղաձիգ ճաքեր մինչև 2 մմ բացվածքով:
- Դիտվում է միջհարկային ծածկերի սալերի միջև կարանների բացում:
- Տեղի է ունեցել արտաքին պատերի, որոշ տեղամասերում, երեսպատման սալիկների անկում:
- Էվակուացիոն սանդուղքների միածույլ երկաթբետոնե հարթակների բետոնե պաշտպանիչ շերտը քայքայված է, կան բաց ու խորքային կոռոզիայի ենթարկված ամրաններով տեղամասեր:
- Տանիքածածկույթն ունի վնասված տեղամասեր, ինչի հետևանքով դիտվում է հալոցքային ու անձրևաջրերի ներթափանցում վերնածածկի սալերի ու պատերի մեջ:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության աստիճանը ըստ գործող ՀՀՇՆ-II-6.02-2006 և հետազոտության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 3-րդ աստիճանի:

Այն ենթակա է ուժեղացման-վերականգնման:

Նկատի ունենալով մանկապարտեզի գործառնական նշանակությունը, ըստ ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» նորմերի պահանջվում է իրականացնել մասնաշենքի սեյսմազինվածության բարձրացմանը միտված միջոցառումներ (վերակառուցման մակարդակը ընդունվում է ուժեղացում, գործող նորմատիվ պահանջներին համապատասխանեցմամբ):

## Սպորտային դահլիճի մասնաշենք

Մասնաշենքն իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, ~13,3x18,4 մ արտաքին եզրաչափերով, միահարկ կառույց:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է լայնական կրող ու երկայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, միաձույլ երկաթբետոնից:

Պատերն իրականացված են տուֆաքարի երկշերտ շարվածքով, ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Արտաքին պատերը դրսի կողմից երեսպատված են տուֆե սրբատաշ սալիկներով, իսկ գետնախարսխային հատվածամասի երեսաշարն՝ սրբատաշ բազալտաքարերից:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Վերնածածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- ❖ Մասնաշենքն իր ծավալահատակագծային ու կոնստրուկտիվ լուծումներով չի համապատասխանում գործող ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.Նախագծման նորմեր» նորմերի որոշ դրույթներին, մասնավորապես՝
- ➢ Վերնածածկը չի ապահովում հորիզոնական հարթության մեջ կոշտ սկավառակի աշխատանքը:
- ➢ Լայնական պատերի ազատ թռիչքը գերազանցում է նորմատիվային պահանջվող նվազագույն 6,0 մ չափը:
- ❖ Մասնաշենքի պատերում առկա են նստվածքային բնույթի, թեք և ուղղաձիգ ճաքեր մինչև 2 մմ բացվածքով:
- ❖ Դիտվում է վերնածածկի սալերի միջև կարանների բացում:
- ❖ Տեղի է ունեցել արտաքին պատերի որոշ տեղամասերում, երեսպատման սալիկների անկում:
- ❖ Տանիքածածկույթն ունի վնասված տեղամասեր:

Ելնելով հետազննության արդյունքներից մասնաշենքի տեխնիկական վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է անբավարար, իսկ վնասվածության

աստիճանը ըստ գործող ՀՀՇՆ-II-6.02-2006 և հետազոտության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 3-րդ աստիճանի:

Այն ենթակա է ուժեղացման-վերականգնման:

Նկատի ունենալով մանկապարտեզի գործառնական նշանակությունը, ըստ ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնականդրույթներ» նորմերի պահանջվում է իրականացնել մասնաշենքի սեյսմակայունության բարձրացմանը միտված միջոցառումներ (վերակառուցման մակարդակը ընդունվում է ուժեղացում, գործող նորմատիվ պահանջներին համապատասխանեցմամբ):

## Եզրահանգում

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի և Մասիսի տեղանքի գրունտները հիմնականում ավազակավ են: Նախկինում տեղի է ունեցել գրունտային ջրերի մակարդակի անկում, ինչը բերել է ավազակավ գրունտների ֆիզիկա-մեխանիկական բնութագրերի փոփոխմանը, ինչի արդյունքում մեծ թվով շենք և շինություններ, այդ թվում դիտարկվող մանկապարտեզի երկու համալիրների մասնաշենքերը ստացել են նստվածքային բնույթի վնասվածքներ:

Մանկապարտեզի «նոր» համալիրի մասնաշենքերում, նստվածքային բնույթի վնասվածքները առավել տեսանելի արտահայտված են անցումային սրահի և մասնաշենքերի միջև կարանների զգալի բացմամբ:

Հետազննվող մանկապարտեզի երկու համալիրների հետագա բնականոն անվտանգ շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ ուժեղացման միջոցառումները՝

- ✓ Կատարել մասնաշենքերի հիմքերի ուժեղացում, ընդ որում հիմքերի ուժեղացման եղանակը պետք է ընտրվի հաշվի առնելով հիմնատակերի գրունտների ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը:
- ✓ Մասնաշենքերի պատերն ուժեղացնել միածույլ երկաթբետոնե երկկողմանի շապիկներով, բացվածքների ընդգրկմամբ՝ սկսած հիմքերից:
- ✓ Միջհարկային ծածկերի հարթությունում, հորիզոնական կոշտ սկավառակներ ստանալու նպատակով. ծածկասալերի մաքուր մակերևույթի վրա տեղադրել պողպատե ցանց, ամրակապելով այն սալերի միջև առանցքներում տեղադրվող ամրանային հարթ կարկասների հետ և բետոնացնել B 15 դասի մանրահատիկավոր բետոնով, նախապես կատարելով տանիքի ու

միջնորմների ապամոնտաժում և մաքրելով ծածկի սալերի վրայի բոլոր շերտերը:

- ✓ «Հին» համալիրի սպորտային դահլիճի ու պահեստի մասնաշենքի երկու հատվածամասերն առանձնացնել դեֆորմացիոն կարանով, զույգ պատերի կամ շրջանակների տեսքով:
- ✓ Մասնաշենքերի երկայնական ու լայնական պատերի միջև նորմատիվային պահանջվող չափի բերելու նպատակով իրագործել լրացուցիչ լայնական («նոր» համալիրի սպորտային դահլիճի մասնաշենքում՝ երկայնական) պատեր, կամ դրանց փոխարինող շրջանակներ, իրենց հիմքերով:
- ✓ Նոր իրականացվող միջնորմների ամրակապումները կրող կոնստրուկցիաների հետ կատարել ՀՀՇՆ II-6.02-2006 նորմերի 7.6 կետի պահանջին համապատասխան:
- ✓ Վերականգնել մասնաշենքերի տանիքները ըստ նախագծային ընտրանքի:
- ✓ Մասնաշենքերում կատարել վերանորոգման աշխատանքներ:
- ✓ Մասնաշենքերի շուրջ իրականացնել կանոնակարգված ջրահեռացման նոր սալվածք:

Բոլոր նշված աշխատանքները պետք է կատարել գործող շիննորմերին համապատասխան մշակված և փորձաքննություն անցած նախագծով:

Թիվ 13 լաբ. վարիչ՝ Ռ.Խաչատրյան

Ճարտարագետ՝ Մ.Հարությունյան

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ

Հավելված 2





Նկ. 10. Մասնաշենքերի արտաքին տեսքը





Նկ. 11. Մասնաշենքի և անցումային սրահի ներքին տեսքը





Նկ. 12.





Նկ. 12. Պատերում առկա ճաքերի տեսքը





Նկ. 13. Ծածկասալերի միջև կարանների բացում



Նկ. 14. Երեսպատվածքի սալիկների անկում





Նկ. 15. Էվակուացիոն սանդուղքների հարթակների վնասվածքները





Նկ. 16. Տանիքածածկույթի վնասվածքները [illegible]

# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
# 4-ՐԴ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
# ՏԱՐՀԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

Հաստատում եմ
Մասիս Քաղաքային Համայնքի
Թիվ 4 Մանկապարտեզ ՀՈԱԿԻ տնօրեն
Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

,, 3 ,, Հունիսի 2019թ.



***Զանգահարել 1-01 կամ 911***

- Հայտնել հասցեն
- Վտանգի տեսակը
- Տուժածների քանակը

***Տարհանել Անձնակազմին***

- Բոլորին ուղղորդել դեպի դուրս սլաքների ուղղությամբ
- Դուրս բերել տարհանման անվտանգ վայր

***Ձեռնարկել վթարների վերականգնողական միջոցներ***

- Հոսանքազրկել սենյակները
- Ցուցաբերել առաջին օգնություն տուժածներին
- Դուրս բերել տուժածներին մանկապարտեզի տարածքից

Հաստատում եմ
Մասիս Քաղաքային Համայնքի
Թիվ 4 Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն
Հ.ՀԱԿՈԲՅԱՆ

„ 3 „ Հունիսի 2019թ.

# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
# 4-ՐԴ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ - Ի 2-րդ ՀԱՐԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
# ՏԱՐՀԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ



***Զանգահարել 1-01 կամ 911***

- Հայտնել հասցեն
- Վտանգի տեսակը
- Տուժածների քանակը

***Տարհանել Անձնակազմին***

- Բոլորին ուղղորդել դեպի դուրս սլաքների ուղղությամբ

-Դուրս բերել տարհանման անվտանգ վայր

***Ձեռնարկել վթարների վերականգնողական միջոցներ***

- Հոսանքազրկել սենյակները
- Ցուցադրել առաջին օգնություն տուժածներին
- Դուրս բերել տուժածներին մանկապարտեզի տարածքից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17114

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(գործունեության տեսակը)

Տրված է « 12 ԱՊՐԻԼԻ 2019թ.» « ՀԱԶԱՐԱՇԵՆ » ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿՈՄԻՏԱՍ ՊՈՂ. 54Ա

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրությունը)
Կ.Տ.

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ
(անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17114 - 1**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՀԱԶԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

ՄԱՐԻ ԿԻՐԱԿՈՍԻ ՍՈՖՅԱՆ 001079920

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության տեսակը)

12. 04. 2019թ.

(տրման ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)
Կ.Տ.

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անունը, ազգանունը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17114 - 2**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՀԱԶԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

([illegible])

ԳՈՒՐԳԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ AP0553938

([illegible])

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ

(գործունեության տեսակը)

12. 04. 2019թ.

(տրման ամսաթիվը)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն, ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

ՔՊԼ N 17114 - 3

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՀԱԶԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

([illegible])

ԱՍՏՂԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԳՅՈԶԱԼՅԱՆ AM0316785

([illegible])

ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՋԵՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության տեսակը)

12. 04. 2019թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՎԵՐՍԻՆՅԱՆ

(անուն, ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17114 - 8**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՀԱՋԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և կազմակերպական իրավական ձևը)

ՄԱՐԻ ԿԻՐԱԿՈՍԻ ՍՈՖՅԱՆ 001079920

(կազմակերպության ղեկավարի անունը և անձնագրային տվյալները)

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության ոլորտը)

**12. 04. 2019թ.**

(տրման ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(կնքադրոշմի տեղը)

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

**ՔՊԼ N 17114 - 9**

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ՀԱՋԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

([illegible])

ԱՍՏՂԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԳՅՈՒԶԱԼՅԱՆ

([illegible])

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության տեսակը)

12. 04. 2019թ.

(տրման ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն, ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա Յ Ի   Ն Ե Ր Դ Ի Ր

ՔՊԼ N 17114 - 10

« ՀԱԶԱՐԱՇԵՆ » ՍՊԸ

ԳՈՀԱՐ ՀՐԱՉԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 003574464

ԿԱՊԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

12. 04. 2019թ.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում